ՀԻՆԳ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ

Ախուրյանի շրջանի Ջրառատ (նախկին Ջրախլի) գյուղում պահվում են հինգ ձեռագիր Ավետարաններ։

Սրանցից հնագույնը հասակակից է Թորոս Ռոսլինին վերագրվող նշանավոր Կիլիկյան Ճաշոցին և ընդօրինակված է նույն 1288 թվականին Արճեշում, Ս. Սարգսի վանքում, Աբրահամ գրչի կողմից։

Մեկ ուրիշ Ավետարան, ընդօրինակված 1630 թվականին, զարդարված է ընտիր, բարձրարվեստ մանրանկարներով և կարող է գրավել իր ուրույն տեղը հայ մանրանկարչական արվեստի պատմության մեջ։

Արժեքավոր են նաև մյուս ձեռագրերը, որոնք առժանացած են մեծ ուշադրության և պահվում են խնամքով։

Նկատի ունենալով հնադարյան այս ձեռագիր մատյանների հնագրական և մանրանկարչական որոշակի արժեքը, ընթերցողների ուշադրությանն ենք հանձնում նրանց համառոտ նկարագրությունը։

ՁԵՌԱԳԻՐ № 1

Բովանդակություն՝ *Ավետարան։*

Ժամանակ՝ *1288*, վայր՝ *Արճեշ, Ս. Սարգսի վանք*, գրիչ՝ *Աբրահամ քահանա*, ստացող՝ *Թորոս քահանա*, թերթ՝ *շուրջ 200*, նյութ՝ *թուղթ*, մեծություն՝ *շուրջ 30×23×7*, տողեր՝ *25—27*, գիր՝ *բոլորգիր*, գրադաշտ՝ *երկայն*, մանրանկարներ՝ *խորան (թ. 4ա), կիսախորան (թ. 5ա)*, տեղ-տեղ *լուսանցազարդեր*, գլխագրեր, վիճակ՝ *բավարար*, կազմը՝ *կաշեպատ տախտակ*, սև, դրոշմազարդ։ Պահվում է Քոթանչոնց Աշխենի (Աշխեն Մարտիրոսյան) տանը։ Ավետարանը գյուղում կոչվում է «Սև ավետարան» (սև կազմի պատճառով), իսկ Ավետարանի տերերը ավելի շատ անվանում են «Մեծ պապ» (ի տարբերություն այս տանը պահվող և հաջորդ համարում նկարագրվող մյուս Ավետարանի, որն ավելի փոքր լինելով կոչվում է «Փոքր պապ»)։

Հիշատակարաններ, նիշատակագրություններ.—*Այս և հաջորդ ձեռագրերն ունեն մի շարք հիշատակարաններ և հիշատակագրություններ։ Բերում ենք նրանցից մի քանիսը։*

Գրչի նիշատակարաններ.

ա) «Ով սուրբ քահանայք և մանկունք Սուրբ Եկեղեցոյ, որք ընթեռնուք զտուրբ Աւետարանս կամ ուրիշ նակէք, յիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս, զծովացեալս մեղաւք, զգրող սորա զԱբրահամ զսուտանուն քահանայ և զծնողս իմ, աղաչեմ զձեզ զամենեսեան յիշեսջիք ի Քրիստոս և զձեզ Տէրն յիշեսցէ յիւր արքայութեանն։

բ) «Ով սրբասնեալ եղբայրք և բաշխողք մարմնոյ և արեանն Տեառն, զանարժան գրողս, որ չեմ արժանի տեսանել զսուրբ և զսոսկալի աստուածաբարբառ կտակս, աներկեղաբար մերձեցայ և ծրագրեցի զՍուրբ Աւետարանս ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի։ Գրեցաւ ի քաղաքի, որ կոչի Արճեշ, ձեռամբ բազմամեղ և անարժան գրչի, սուտանուն քահանայի, որոյ Աբրահամ ճանաչի...

...գրեցաւ ի թուականութեանս Հայոց ՉԼԷ (1288) ի ժամանակին, որ է տեղապահ աշխարհիս Ղան Արղուն, որոյ տացէ նմա Տէր Աստուած վայելել զաթոռ իւրոյ իշխանութեան, եղբարաց և զաւակաց իւրոց և զթշնամիս իւրեանց հալածական առնէ...»։

Հիշատակարան ստացողի *(այլ ձեռագրով)*.

«Ով մանկունք Սուրբ Սիոնի և ընթերցողք Սուրբ Աւետարանիս, զմեղուսեալ ծառայս Թորոս քահանայ զստացող բառիս յիշեցէք...»։

ՁԵՌԱԳԻՐ № 2

Բովանդակություն՝ *Ավետարան։*

Ժամանակ՝ *1630 թ.*, ստացող՝ *Մատթեոս*, թերթ՝ *267*, նյութ՝ *թուղթ*, մեծություն՝ *շուրջ 20×15×8 սմ.*, գիր՝ *բոլորգիր*, վիճակ՝ *բավարար*, կազմը՝ *կաշեպատ տախտակ*, սև։ Պահվում է նույն Քոթանչոնց Աշխենի տանը և կոչվում է «Փոքր պապ»։

Մանրանկարչություն.—*Ձեռագիրը զարդարված է ընտիր մանրանկարներով. կան խորաններ, կիսախորաններ, զարդագրեր, լուսանցազարդեր, թռչուններ և այլ մանրանկարներ։ Լուսանցքներում երբեմն կան սրբերի նկարներ և այլ պատկերներ։ Համարյա բոլոր էջերում հանդիպում են պարբերություններն սկսող ոսկեզօծ զարդագրեր։ Մանրանկարներում օգտագործված են զանազան գույներ և ոսկի։*

Նշանավոր մանրանկարներ են (ձեռագրերի թերթերը համարակալված չեն, նշում ենք բանավոր համարները)։

Թ. 1—2.—Երկու խորան՝ Եվսեբիոսի առ Կարպիանոս նամակի համար։

Թ. 3—8.—Վեց խորան՝ Ավետարանների համաբարբառ կանոնների համար։

Թ. 9.—Մատթեոս ավետարանչի նկարը։

Թ. 10.—Կիսախորան, որից ներքև՝ գեղեցիկ թռչնագրերով ընդօրինակված են Մատթեոսի Ավետարանի սկզբի խոսքերը՝ «Գիրք ծննդեան...»։

Թ. 85.—Մարկոս ավետարանչի նկարը։

Թ. 86.—Կիսախորան, վարը թռչնագրերով՝ «Սկիզբն Աւետարանի...»։

Թ. 141.—Ղուկաս ավետարանչի նկարը։

Թ. 142.—Կիսախորան, վարը թռչնագրերով՝ «Քանզի բազումք...»։

Թ. 224.—Հովհաննես ավետարանչի նկարը։

Թ. 225.—Կիսախորան, վարը թռչնագրերով՝ «Ի սկզբանէ էր բանն...»։

Հիշատակագրություններ.

Գրչի, թ. 266.

«Փառք ամենասուրբ երրորդութեան,
Երեքանձնեա սուրբ տէրութեան,
Միասնական աստուածութեան,
Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Ի թուականին Հայոց ՌՀԹ (1630) ամին»։

Ստացողի, թ. 266.

«Եւ այս վերջին ստացող Աւետարանիս Մաթէոսն և կողակցոյն Մինախաթունն և իւր որդին Յարութէնն և իւր դուստրն Հռոմն, Սառէն, Վարվառն և Յարութէնի կողակիցն Նազին և որդւոյն։ Աստուած պահեսցէ Ղուլին, Շահվերդին և իւր դստերացն՝ Յուրին, Մարիանին, Ղզնրաթին, Նանանղին և արեան մերձաւորացն ողորմի ասացէք»։

ՁԵՌԱԳԻՐ № 3

Բովանդակություն՝ Ավետարան։

Կոչվում է «Փրկիչ»։ Ընդօրինակված է ԺԵ—ԺԶ դ. դ.։ Սև, կաշեպատ տախտակի կազմի վրա փակցված է մի ականակուռ խաչ։ Ավետարանը զարդարված է մանրանկարներով. կան խորաններ, ավետարանիչների նկարներ, կիսախորաններ, լուսանցազարդեր։

Պահվում է Դանիելյան Արտավազդի տանը։ 1918—1920 թվականներին, փախուստի ժամանակ, Ավետարանն ընկել է շուրջը և երկար ժամանակ մնացել այնտեղ։ Այս պատճառով մի շարք թերթեր կպել են իրար։ Թերթերն իրարից անջատելու փորձերի ժամանակ մանրանկարներից մի քանիսը պոկվել են, փչացել։

Ձեռագիրն ունի հիշատակարաններ։

Արժեքավոր են այս ձեռագրի կազմի առաջին և երկրորդ փեղկերին փակցված պահպանակները, որոնք կրում են շուրջ ԺԴ դարում գրված (Մեսրոպյան ուղղագիծ երկաթագիր) մի բնագիր։

ՁԵՌԱԳԻՐ № 4

Բովանդակություն՝ Ավետարան։

Ընդօրինակված է ԺԶ—ԺԷ դարերում։

Պահվում է նախորդ ձեռագրի տիրոջ՝ Դանիելյան Արտավազդի տանը։ Սև կաշեպատ տախտակյա կազմի վրա փակցված է մի մետաղյա խաչ։ Ունի հիշատակագրություններ։ Վիճակը բավարար է։

ՁԵՌԱԳԻՐ № 5

Բովանդակություն՝ Ավետարան։

Կոչվում է «Կարմիր Ավետարան»։ Կազմը՝ կաշեպատ, կարմիր։ Ավետարանը հիմնականում տպագիր է։ Հնատիպ գրքի և կազմի միջև զետեղված են երկու-երեք պրակ ձեռագիր մասունք Ավետարանից, ընդօրինակված ԺԶ—ԺԷ դ. դ.։ Ավետարանը պատկանում է Մինասյան խանումին։

Գ. ԱՐԳԱՐՅԱՆ